ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Կատարողականի հաշվեքննության
արդյունքների վերաբերյալ

Հաստատվել է Հաշվեքննիչ պալատի
2025 թվականի փետրվարի 27-ի N 16–Ա որոշմամբ

Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացումը

Արդյունավետ վերականգնողական արդարադատություն ապահովում է հանցագործի ու կարիքների արժանահավատ գնահատում և հանցագործի վերասոցիալականացման միջոցառումների իրականացում՝ զոհի/ներգործի արդյունավետ թվային փոխակերպման ձանապարհով

ԿՀ-0003-25-02 **2025**

Հաշվեքննիչ պալատի առաքելությունն է՝ նպաստել հանրային կառավարումը **բարելավելուն**:

Դրան հասնելու համար Հաշվեքննիչ պալատն իրականացնում է հաշվեքննություններ, որոնց արդյունքում **ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ** տեղեկատվություն է տրամադրում հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետությունում արտաքին պետական հաշվեքննության (հանրային հատվածում արտաքին աուդիտի) ոլորտում քաղաքականությունը մշակող, հաստատող և իրականացնող անկախ պետական մարմինն է: Յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատն ընդունում է իր գործունեության ծրագիրը՝ ելնելով հաշվեքննության առաջնահերթ ուղղություններից: Հաշվեքննությունների իրականացմամբ Հաշվեքննիչ պալատը գնահատում է հանրային միջոցների կառավարման օրինականությունը (ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ) և արդյունավետությունը (կատարողականի հաշվեքննություններ): Իր գործունեության ընթացքում Հաշվեքննիչ պալատը ղեկավարվում է թափանցիկության ու հաշվետվողականության արժեքներով և պարբերաբար հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանն է ներկայացնում հաշվետվություններ հանրային միջոցների կառավարման օրինականության և արդյունավետության վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի առանցքային նպատակադրումն է՝ համակարգային խնդիրների վերհանման և լուծումների առաջարկների միջոցով նպաստել քաղաքացու կյանքում դրական փոփոխություններին:

Միջնաժամկետ հորիզոնում Հաշվեքննիչ պալատը նպատակադրել է՝ **մարդակենտրոն հաշվեքննությունների** միջոցով նպաստել մարդու պահանջմունքներն արդյունավետորեն հասցեագրող հանրային կառավարմանը և միջազգային լավագույն փորձին համահունչ՝ պետության **ինստիտուցիոնալ** կարողությունների զարգացմանը:

Այդ նպատակով իրականացվող կատարողականի հաշվեքննության առաջնահերթություններից է «Մարդուն մատչելի և **արդյունավետ արդարադատությունը**»:

Հաշվեքննության առաջնահերթությունները սահմանվում են՝ ելնելով հաշվեքննության գործառույթի միջոցով հանրային շահին միտված հավելյալ արժեք ստեղծելու ներուժից, հիմնախնդրի էականությունից և հաշվեքննելիությունից: Միջնաժամկետ հորիզոնում արտաքին պետական հաշվեքննության 7 առաջնահերթություններն են հանդիսանալու՝ (1) Մարդուն մատչելի, հասանելի, որակյալ և դիմակայուն առողջապահությունը, (2) Մարդուն մատչելի և որակյալ ցկյանս կրթությունը, (3) Մարդուն շրջապատող մաքուր և անվտանգ միջավայրը, (4) Մարդուն մատչելի և արդյունավետ արդարադատությունը, (5) Արտահանմանը միտված, գիտահեն և մրցակցային տնտեսության զարգացումը, (6) Պետական ֆինանսների և սեփականության կառավարման ինստիտուտների զարգացումը, (7) Ներդաշնակ զարգացող համայնքները: Հաշվեքննության առաջնահերթություններին, ինչպես նաև յուրաքանչյուր առաջնահերթության շրջանակում ձևակերպված հաշվեքննության հիմնական ուղղություններին հնարավոր է ծանոթանալ «Հաշվեքննիչ պալատի 2025-2027թթ. առաջնահերթությունները» փաստաթղթում, որի էլեկտրոնային տարբերակը հասանելի է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում. www.armsai.am:

Բովանդակություն

Հապավումներ **5**

Ամփոփագիր **6**

Ներածություն **7**

Հաշվեքննության արդյունքները **11**

Պրոբացիայի շահառուների ռիսկերն ու կարիքները համարժեքորեն չեն բացահայտվել 11

Տեղեկատվական կառավարման համակարգն ունի զգալի չիրացված ներուժ 16

Վերասոցիալականացման ծրագրերին մասնակցել է պրոբացիայի շահառուների փոքր մասը 18

Ներդրված չի եղել վերասոցիալականացման միջոցառումների արդյունքների գնահատման համակարգ 24

Եզրակացություն **26**

Առաջարկություններ և արձագանք **27**

Հաշվեքննության մասին **33**

Հապավումներ

ԱՆ	Արդարադատության նախարարություն
Առն	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ՊԾ	Պրոբացիայի ծառայություն
ՊԾՆԿ	Պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգ
ՊՄՕ	«Պրոբացիայի մասին» օրենք
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ՔՕ	Քրեական օրենսգիրք

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԻՆՉՈ՞Ւ ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Պրոբացիայի ծառայությունը, որը նպատակ է հետապնդում ավանդականի փոխարեն վերականգնողական արդարադատություն կիրառելու ճանապարհով նպաստել շահառուների վերասոցիալականացմանը՝ դրանով իսկ մեղմելով հանրային անվտանգության հետ կապված ռիսկերը, մեր երկրում համեմատաբար «երիտասարդ» պատմություն ունի:

Տվյալ հաշվեքննության նախաձեռնմանը նպաստեց պրոբացիայի շահառուների կազմում կրկնահանցագործություն կատարած անձանց տեսակարար կշռի աճի միտումը (Գծապատկեր 1):

Հաշվեքննիչ պալատը գնահատել է Պրոբացիայի ծառայության վերասոցիալականացման միջոցառումների արդյունավետությունը և ներկայացրել բարելավմանը միտված առաջարկություններ:

Ի՞ՆՉ ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ. Հաշվեքննությամբ արձանագրվեց, որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պրոբացիայի 4252 շահառուներից միայն 1/3-ի համար է իրականացվել ռիսկերի գնահատում, իսկ 2/3-ը շարունակել է մնալ «չճանաչված», հետևաբար նաև՝ առանց հասցեական միջոցառումների իրականացման հնարավորության: Բացահայտվել են ռիսկերի գնահատում անցած շահառուների 11.5%-ի կամ պրոբացիայի շահառուների 3.3%-ի կարիքները:

Արձանագրվել է նաև, որ վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցել է 359 շահառու կամ շահառուների թվի 8%-ը, իսկ անչափահաս 33 շահառուներից՝ միայն 7-ը կամ 21%-ը:

Ընդ որում, վերասոցիալականացման համակարգը հիմնականում կենտրոնացած է եղել մշակութային և կրոնական միջոցառումների վրա, մինչդեռ աշխատանքային, կրթական, առողջապահական և հոգեբանական աջակցությունը խիստ սահմանափակ է եղել:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ պրոբացիայի շահառուների համար իրականացված վերասոցիալականացման միջոցառումների արդյունքների գնահատման մեթոդաբանություն ներդրված չէ, ինչը հանգեցնում է միջոցառումների արդյունքների վերաբերյալ չափելի տվյալների (օրինակ՝ աշխատանքի տեղավորման կամ վարքագծի բարելավման ցուցանիշներ) բացակայության: Այս հանգամանքը դժվարացնում է Պրոբացիայի ծառայության կողմից միջոցառումների արդյունավետության վերլուծությունն ու դրանց շարունակական բարելավումը:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ. Հաշվեքննիչ պալատը ներկայացրել է մի շարք առաջարկներ, որոնց իրագործմամբ հնարավոր է բարելավել Պրոբացիայի ծառայության գործունեությունը: Դրանք ենթադրում են ներդնել պրոբացիայի շահառուների ռիսկերի ու կարիքների գնահատման արդյունավետ համակարգ, բացահայտված կարիքները համարժեքորեն հասցեագրող վերասոցիալականացման միջոցառումների պլանավորման և դրանց արդյունքների գնահատման մեխանիզմներ, ինչպես նաև իրականացնել նշված գործողությունների արդյունավետ թվային փոխակերպում:

Ներածություն

1. Պրոբացիոն ծառայությունների ձևավորումն ու զարգացումը հետևանք է արդարադատության բնագավառում հարացույցի մարդակենտրոն փոփոխությունների, որոնք բնութագրվում են ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատությանն անցմամբ: Այն նախևառաջ հիմնված է մարդու արժանապատվության և փոխվելու ներուժի գնահատման վրա՝ թույլ տալով, որ պատժամիջոցը լավագույնս ծառայի իր նպատակին:

2. Վերականգնողական արդարադատությունը ծախսարդյունավետ է և բխում է հանրային շահից: Մի կողմից, վերասոցիալականացված անձը հանրային արժեքի ավելացման ներուժ է պարունակում (պայմանավորված հանրային արժեք ստեղծելու սահմանափակումների նվազմամբ, ընդ որում՝ թե՛ իր վարքագծի, թե՛ հանրային ընկալման փոփոխության հետևանքով) և ավելի քիչ է հակված կրկնահանցագործության կատարման: Մյուս կողմից, անձը, կատարելով հանցագործություն, արդեն իսկ որոշակի վնաս է հասցնում հանրությանը (պետությանը), իսկ ազատազրկումն, ինքնին, ոչ միայն չի հատուցում պատճառված վնասը, այլև ենթադրում է լրացուցիչ ծախսեր՝ ազատազրկման ընթացքում դատապարտյալին ՔԿՀ-ում պահելու համար: Գնահատումները ցույց են տալիս, որ պրոբացիայի շահառուի վրա կատարվելիք ծախսը մի քանի անգամ ավելի պակաս է ազատազրկված անձի վրա կատարվող ծախսից[1]: Ըստ այդմ՝ *այն դեպքերում, երբ անձի վտանգավորության չափը չի ազդում համընդհանուր անվտանգության վրա,* հասարակությունում տվյալ անձի վերասոցիալականացումը նպաստում է նաև արդարադատության ծախսարդյունավետության աճին:

3. Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական ծառայությունից անկախ պրոբացիայի ինստիտուտը վերջին շուրջ մեկ տասնամյակի ընթացքում անցել է կայացման որոշակի ճանապարհ: Միևնույն ժամանակ, վերջին ժամանակահատվածում նկատվում է պրոբացիայի շահառուների կողմից կատարված կրկնահանցագործությունների աճի միտում (Գծապատկեր 1):

[1] ՀՀ-ում և ԱՄՆ-ում իրականացված գնահատումները վկայում են մինչև 8-ապատիկ տարբերությունների մասին: Աղբյուր՝ Հայեցակարգ ՀՀ-ում ՊԾ-ի ներդրման վերաբերյալ, ԱՆ, 04/02/2014թ., https://moj.am/legal/view/article/598, ԱՄՆ դատական իշխանության պաշտոնական կայք-էջ՝ https://www.uscourts.gov/data-news/judiciary-news/2017/08/17/incarceration-costs-significantly-more-supervision:

Գծապատկեր 1. **Պրոբացիայի ծառայությունում առկա վարույթներով իրականացված անձանց կազմում կրկնահանցագործություն կատարած անձանց տեսակարար կշիռը (%), 2021-2024թթ.**



Աղբյուր՝ *Պրոբացիայի ծառայություն, Հաշվետվություններ, www.probation.am:*

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

4. Տվյալ հաշվեքննության նպատակն է՝ գնահատել պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված՝ պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել տվյալ բնագավառում հանրային կառավարման բարելավմանը նպաստող առաջարկություններ:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման ուղղությամբ քաղաքականության միջոցառումների նպատակային արդյունավետությունը (սահմանված նպատակներին հասնելու աստիճանը) գնահատելու համար, հաշվեքննության շրջանակում որպես չափանիշներ են կիրառվել պետության հայտարարած հետևյալ նպատակներն ու հանձնառությունները.

5.1. **Պրոբացիայի նպատակներից** են՝ պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը[2], հասարակության անվտանգության ապահովումը՝

[2] Պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաև նրա ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը:

կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով (ՊՄՕ, հոդվ. 5):

5.2. **Կառավարության 2021-2026թթ. ծրագրի** համաձայն, վերականգնողական արդարադատության սկզբունքները և արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսության *(Կառավարության 2021-2026թթ. ծրագրի 5.6-րդ՝ «Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ» բաժին)*:

5.3. **Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների** համաձայն, պրոբացիոն գործակալությունները պետք է նպատակ ունենան իրավախախտների հետ դրական հարաբերություններ հաստատելու միջոցով նվազեցնելու կրկնահանցավորությունը՝ նրանց նկատմամբ վերահսկողություն (ըստ անհրաժեշտության՝ նաև հսկողություն) սահմանելու, նրանց ուղղորդելու և օժանդակելու, ինչպես նաև նրանց բարեհաջող սոցիալական ներառումը խթանելու նպատակով *(ԵԽ նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1 հանձնարարականը անդամ երկրներին, հիմնական սկզբունքներ, կետ 1)*:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

6. Հաշվեքննությունը կենտրոնացել է հետևյալ գործոնների վրա.

6.1. Պրոբացիայի շահառուների **վերասոցիալականացման** գործընթացի արդյունավետության գնահատման վրա, այդ թվում՝

- պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման համակարգի.
- պրոբացիայի շահառուի վերաբերյալ բացահայտված ռիսկերն ու կարիքները հասցեագրող վերասոցիալականացման միջոցառումների պլանավորման և իրականացման.
- իրականացված միջոցառումների նկատմամբ հետհսկողության (follow-up) համակարգի:

6.2. Տվյալ բնագավառում հանրային կառավարման **թվային փոխակերպման** վրա:

7. Հաշվեքննության հարցերը, ժամկետները, մոտեցումը և մեթոդաբանական այլ մանրամասները ներկայացված են «Հաշվեքննության մասին» բաժնում:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԷԱԿԱՆ

8. Հաշվեքննության նշված կենտրոնացման էականությունը պայմանավորող հիմնական գործոններն են.

8.1. Պրոբացիայի շահառուի վերաբերյալ բացահայտված ռիսկերն ու կարիքները համարժեքորեն հասցեագրող վերասոցիալականացման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը պարունակում է իրավախախտ անձին հասարակություն վերադարձնելու և կրկնահանցագործությունից զերծ պահելու նշանակալի ներուժ:

8.2. Տվյալ բնագավառում արդյունավետ թվային փոխակերպումն էական նշանակություն ունի տվյալների (ապացույցների) վրա հիմնված քաղաքականության միջոցառումների պլանավորման, ինչպես նաև էլեկտրոնային կառավարման համակարգի շրջանակում անհատական դեպքի արդյունավետ կառավարում իրականացնելու տեսանկյունից:

Հաշվեքննության արդյունքները

Պրոբացիայի շահառուների ռիսկերն ու կարիքները համարժեքորեն չեն բացահայտվել

ԻՆՉՈ՞Ւ Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

9. Առանց պրոբացիայի շահառուների կարիքների համարժեք գնահատման անհնար է պլանավորել և իրականացնել անձի վերականգնումն ապահովող արդյունավետ վերասոցիալականացման ծրագրեր: Միևնույն ժամանակ, շահառուների ռիսկայնության թերագնահատումը ձևավորում է սպառնալիքներ հանրային անվտանգության տեսանկյունից:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

10. Հաշվեքննության տվյալ արդյունքը պայմանավորող հիմնական պատճառներն են՝

- *մեթոդաբանություն*. պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման կիրառված գործիքակազմը թույլ չի տվել համարժեքորեն բացահայտել առկա պատկերը.
- արձագանքող (ռեակտիվ) մոտեցման գերակայություն նախաձեռնողական (պրոակտիվ) մոտեցման նկատմամբ:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

11. Ռիսկերի և կարիքների գնահատումը ենթադրում է վերհանել պրոբացիայի շահառուի կողմից կատարված կամ ենթադրյալ կատարված արարքի պատճառները և պլանավորել այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան նվազեցնել կատարված կամ ենթադրյալ կատարված հանցագործության կրկնության հավանականությունը:

Աղբյուր՝ ՊՄՕ, հոդվ. 3, մաս 1, կետ 14:

12. Պրոբացիայի սկզբունքներից են՝

- ***տարբերակման և անհատականացման սկզբունքը***, որը ենթադրում է, որ ՊԾ-ն տարբերակում է պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի անձը, մշակում է նրա վերասոցիալականացման և օրինապահ վարքագիծը խթանելու *անհատական ծրագիր*՝ հաշվի առնելով կատարած հանցանքը և անձի սոցիալ-հոգեբանական վիճակը, ինչպես նաև ՊԾ-ի անչափահաս շահառուների լավագույն շահը.
- ***զուգակցման սկզբունքը,*** որը ենթադրում է, որ պրոբացիայի շահառուի նկատմամբ կիրառված պատիժը և հարկադրանքի այլ միջոցները կարող են *զուգակցվել* անձի *վերասոցիալականացմանն* ուղղված՝ օրենքով նախատեսված *այլ միջոցների հետ*.
- ***աջակցության սկզբունքը,*** որը ենթադրում է, որ ՊԾ-ն *վերասոցիալականացման միջոցառումների շրջանակում* ապահովում է պրոբացիայի շահառուների *մշտական աջակցություն*՝ նրանց տրամադրվող օգնության և խորհրդատվության միջոցով:

Աղբյուր՝ ՊՄՕ, հոդվ. 5, 6, 10:

13. Պրոբացիայի շահառուին հաշվառելուց հետո, պետք է իրականացվի ռիսկերի և կարիքների գնահատում, որը հիմք է հանդիսանում վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագրի կազմման համար: …Հարկավոր է գնահատել իրավախախտի անձը՝ համակարգային և հիմնավոր կերպով անդրադառնալով տվյալ գործի հանգամանքներին, ներառյալ՝ ռիսկերին, *դրական գործոններին* ու կարիքներին, այդ կարիքները բավարարելու համար պահանջվող միջմատություններին և այդ միջամտություններին իրավախախտի արձագանքին: Հարկավոր է պատշաճ նշանակություն տալ իրավախախտի *անձնական ուժեղ կողմերին*: Հնարավոր բոլոր դեպքերում իրավախախտները պետք է կարողանան ակտիվ ներդրում ունենալ ֆորմալ գնահատման գործում: Դա կարող է կատարվել իրավախախտների տեսակետներին և անձնական ցանկություններին, նրանց անձնական ուժեղ կողմերին պատշաճ նշանակություն տալու և հետագա հանցավորությունից խուսափելու հարցում պատասխանատու վերաբերմունք ցուցաբերելու միջոցով:

Աղբյուր՝ ՊԾՆԿ, կետ 202 և 130, ԵԽ պրոբացիոն կանոններ, մաս 5, կետ 66-71:

14. Վերահսկողությունը պետք է դիտվի ոչ միայն որպես բացառապես հսկիչ գործառույթ, այլև որպես իրավախախտներին խորհրդատվություն տրամադրելու, օժանդակություն ցուցաբերելու և նրանց շահագրգռելու միջոց: Համապատասխան դեպքերում այն պետք է համակցված լինի պրոբացիոն կամ այլ գործակալությունների կողմից իրականացվող միջամտությունների հետ, ինչպիսիք են՝ վերապատրաստումը, հմտությունների կատարելագործումը, աշխատանք գտնելու հնարավորությունները և բուժումը: Պրոբացիոն գործակալությունները երբեք չեն տրամադրում *պարզապես* մոնիթորինգի և հսկողության ծառայություններ՝ անգամ այն հանգամանքներում, երբ նշվածները կարող են լինել վերահսկողության անհրաժեշտ մաս: Հենվելով մարդկանց փոխվելու ներուժի վրա, պրոբացիան ձգտում է հասնել վերականգնման՝ աշխատելով իրավախախտների հետ՝ օգնելու նրանց և խթանելու օրինահարգ վարքագիծը, այդ թվում՝ իրավախախտների համար ստեղծելով հնարավորություններ, օգնելով նրանց ձեռք բերել այդ հնարավորությունները պատշաճ

հասցեագրող հմտություններ և մոտիվացնելով նրանց այդ ուղղությամբ: Հարկավոր է լիովին հաշվի առնել իրավախախտների անհատականության բազմազանությունը և նրանց բազմազան կարիքները:

Աղբյուր՝ ԵՄ պրոբացիոն կանոններ, կետ 54-55, ԵՄ պրոբացիոն կանոնների մեկնաբանություններ, կետ 1:

15. Վաղաժամկետ ազատումից հետո իրականացվող վերահսկողությունը պետք է նպատակ ունենա բավարարելու իրավախախտի՝ ազատվելուց հետո հասարակությունում իրեն վերագտնելու հետ կապված կարիքները, ինչպիսիք են՝ զբաղվածությունը, բնակարանային ապահովումը, կրթությունը, ինչպես նաև՝ ապահովելու ազատման նախապայմանների պահպանումը…:

Աղբյուր՝ ԵՄ պրոբացիոն կանոններ, կետ 61:

16. Համայնքային ծառայությունը *[հանրային աշխատանքը]* չպետք է խարանող բնույթ ունենա, իսկ պրոբացիոն գործակալությունները պետք է սահմանեն և կիրառեն այնպիսի աշխատանքներ, որոնք կնպաստեն իրավախախտների մոտ հմտությունների ձևավորմանը և նրանց սոցիալական ներառմանը:

Աղբյուր՝ ԵՄ պրոբացիոն կանոններ, կետ 47:

17. Այն դեպքերում, երբ պրոբացիոն վերահսկողության շրջանակում կիրառվում է *էլեկտրոնային մոնիթորինգը*, այն պետք է համակցված լինի վերականգնման և կրկնահանցավորության կանխման տարրեր պարունակող միջամտությունների հետ:

Աղբյուր՝ ԵՄ պրոբացիոն կանոններ, կետ 57:

18. Ազատությունից զրկելու հետ չկապված տվյալ միջոցի շրջանակում, համապատասխան դեպքերում անհրաժեշտ է մշակել զանազան ծրագրեր՝ … իրավախախտների կարիքներին առավել արդյունավետ արձագանքելու նպատակով: Նման գործողությունների անհրաժեշտության վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում հարկավոր է ջանքեր գործադրել իրավախախտի կենսագրությունը, անձը, հակումները, մտավոր կարողությունները, արժեքները և հատկապես՝ իրավախախտումը կատարելուն դրդած հանգամանքներն ընկալելու ուղղությամբ:

Աղբյուր՝ Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ), կետ 13.1-13.3:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

19. 2024թ. սկզբի դրությամբ հաշվառման ներքո է գտնվել պրոբացիայի 4752 շահառու: Ներկայացվել են տվյալներ 4252 շահառուի մասով, ընդ որում՝ լրացված մասնակիորեն[3]:

20. Շահառուների շուրջ 2/3-ի ռիսկերը չեն գնահատվել: Ռիսկերի գնահատում իրականացվել է 1343 դեպքում: Ռիսկերի և կարիքների գնահատում չանցած դեպքերի հիմնական մասը վերաբերում է այն շահառուներին, որոնց նկատմամբ կիրառվել է տուգանք (47.4% դեպքերում), տնային կալանք (6.5%

[3] Գնահատումն իրականացվել է ՀՊ-ի հարցմանն ի պատասխան ԱՆ ՊԾ-ի տրամադրած՝ հաշվառման վերցված և 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառումից դեռևս չհանված պրոբացիայի շահառուների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա:

դեպքերում) և հանրային աշխատանք (3.8% դեպքերում): Շահառուների շուրջ 2/3-ին համալիր կերպով «չճանաչելը» ձևավորում է ռիսկեր վերականգնողական արդարադատության համատեքստում՝ անձի վերասոցիալականացման և կրկնահանցագործության հավանականության նվազեցման տեսանկյունից: Օրինակ, եթե անձը նվազ վտանգավորության արարք է կատարել և նրա նկատմամբ կիրառվել է տուգանք, արդյո՞ք միայն տուգանքի վճարման / չվճարման փաստի արձանագրումը բավարար է: Միգուցե՞ սոցիալապես անապահով կամ գործազուրկ անձի նկատմամբ կիրառված տուգանքը, առանց լրացուցիչ միջոցառումների իրականացման, ավելի շատ մեծացնի ոչ թե վերականգնման, այլ՝ կրկնահանցագործության հավանականությունը: Նշված հարցերը կարող են հասցեագրվել կարիքների գնահատման համատեքստում:

21. Ռիսկերի գնահատում չանցած շահառուների շրջանում կրկնահանցագործության մակարդակն ավելի բարձր է եղել ռիսկերի գնահատում անցած շահառուների համեմատությամբ: Մասնավորապես, ռիսկերը չգնահատված շահառուների 13%-ն ունեցել է նախկին դատվածություն, իսկ 7%-ը նախկինում կրկին եղել է պրոբացիայի շահառու: Մինչդեռ, ռիսկերի գնահատում անցած շահառուների 11%-ն է ունեցել նախկին դատվածություն, իսկ 5%-ը՝ նախկինում հանդիսացել պրոբացիայի շահառու:

22. Գնահատված ռիսկերի 1343 դեպքից 1332-ի դեպքում գնահատվել է ցածր ռիսկ, միայն 1 դեպքում՝ բարձր և 10 դեպքում՝ միջին ռիսկ, որը վկայում է այն մասին, որ ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը չի արտացոլել իրական պատկերը: Օրինակ, ցածր ռիսկ գնահատված 1332 շահառուներից 156-ն ունի նախկին դատվածություն, որից 43 դեպքով՝ 2 և ավելի անգամ:

23. Բացահայտվել են ռիսկերի գնահատում անցած շահառուների 11.5%-ի կամ պրոբացիայի շահառուների 3.3%-ի կարիքները (155 դեպքում): Ընդ որում՝

- հնարավորինս նվազ միջամտության կարիք ունեցող գնահատված 101 շահառուից 50-ը չունի մասնագիտություն և աշխատանք.
- զբաղվածության և աշխատանքի կարիք գնահատվել է ընդամենը 12 շահառուի համար՝ այն դեպքում, երբ ռիսկերի գնահատում անցած 260 շահառու չի աշխատում.
- կրթության և մասնագիտության կարիք գնահատվել է ընդամենը 3 շահառուի համար՝ այն դեպքում, երբ ռիսկերի գնահատում անցած 439 շահառու չունի մասնագիտություն:

24. Ռիսկերի ու կարիքների գնահատման համակարգի առկա վիճակը հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում սահմանափակել է շահառուների կարիքները համարժեք հասցեագրող ծրագրերի և միջոցառումների մշակման հնարավորությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրոբացիայի ծառայությանը

25. Ռիսկերի և կարիքների գնահատման վերանայված, ժամանակի և տարածության մեջ փորձարկված արդիական մեթոդաբանության հիման վրա ստանալ պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների ամբողջական և ճշգրիտ պատկերը *(Առաջարկություն N 1)*:

Տեղեկատվական կառավարման համակարգն ունի զգալի չիրացված ներուժ

ԻՆՉՈ՞Ւ Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

26. Արդյունավետ տեղեկատվական կառավարման համակարգն անհրաժեշտ է տվյալների վրա հիմնված անհատական դեպքի կառավարման, ինչպես նաև համարժեք քաղաքականության միջոցառումների մշակման համար:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

27. Տեղեկատվական կառավարման գործող համակարգն առավելապես նախագծված է, որպես փաստաթղթաշրջանառության համակարգ:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

28. ՊԾ-ի առջև դրված խնդիրների և գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով ՊԾ-ն ձևավորում և վարում է տվյալների շտեմարան:

Աղբյուր՝ ՊՄՕ, հոդվ. 40, մաս 1:

29. Պետք է ներդրվեն հետազոտության և տեղեկատվության մշակման մեխանիզմներ՝ իրավախախտների նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ կիրառելու իրականացման վերաբերյալ տվյալներ ու վիճակագրություն հավաքելու և վերլուծելու համար:

Աղբյուր՝ Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ), կետ 20.3:

30. Պետք է իրականացնել կանոնավոր գնահատումներ՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների իրականացումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Աղբյուր՝ Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ), կետ 21.2:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

31. ՊԾ-ում գործերի թվայնացման նպատակով ԵԽ աջակցությամբ 2022թ.-ին ներդրվել է e-probation էլեկտրոնային համակարգը, որն ամբողջությամբ գործարկվել է 2023թ. հունիսից: Նշված էլեկտրոնային համակարգով իրականացվում է ՊԾ ամբողջ փաստաթղթաշրջանառությունը և շահառուների անձնական գործերի վարումը: Այլընտրանքային խափանման միջոցների գործերի վարումն իրականացվում է թղթային տարբերակով[4]:

[4] Պայմանավորված է այն հանգամանքով, որ ՊԾ-ն այլընտրանքային խափանման միջոցների կատարումն իրականացնում է 2023թ. հունվարից, իսկ e-probation էլեկտրոնային համակարգը ներդրվել էր ավելի վաղ:

32. e-probation.am համակարգում «կենդանի» տվյալների փոխարեն, հիմնականում ներմուծված է թղթային կրիչներով առկա տեղեկատվությունը (լուսապատճեններ)՝ այդ համակարգն առավելապես վերածելով փաստաթղթավորման հարթակի և սահմանափակելով տվյալների վրա հիմնված վերլուծությունների իրականացման, համապարփակ հաշվետվությունների գեներացման ներուժը: Օրինակ, համակարգի սահմանափակումներով պայմանավորված, պրոբացիայի շահառուների վերաբերյալ հաշվեքննությամբ հայցված տվյալների ներկայացման համար պահանջվեց ավելի քան 3.5 ամիս, մինչդեռ, «կենդանի» տվյալների առկայության դեպքում, նշված տվյալները հնարավոր կլիներ ձևավորել և համակարգից արտահանել ակնթարթորեն:

33. Առկա չէ բավարար փոխգործելիություն հանրային հատվածում առկա այլ համակարգերի հետ, որը թույլ կտար *ինքնաշխատ* կերպով ձևավորել շահառուների վերաբերյալ տվյալները՝ առանց հավելյալ մարդ/ժամերի ծախսման:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդարադատության նախարարությանը

34. Տեղեկատվական կառավարման համակարգում ապահովել պրոբացիայի շահառուին վերաբերելի, փաստաթղթերում պարունակվող տվյալների մուտքագրման հնարավորություն, տվյալների այլ շտեմարանների հետ փոխգործելիության հիման վրա տվյալների ինքնաշխատ լրացում, ինչպես նաև առկա տվյալների հիման վրա հաշվետվությունների (ինչպես շահառուի մակարդակում, այնպես էլ՝ ագրեգացված՝ բոլոր շահառուների կամ նրանց առանձին խմբերի մակարդակում) գեներացում *(Առաջարկություն N 2):*

Վերասոցիալականացման ծրագրերին մասնակցել է պրոբացիայի շահառուների փոքր մասը

ԻՆՉՈ՞Ւ Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

35. Վերասոցիալականացման ծրագրերն անհրաժեշտ են՝ ապահովելու համար շահառուների սոցիալական ինտեգրումն ու կրկնահանցագործությունների ռիսկի կառավարումը:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

36. Հաշվեքննության տվյալ արդյունքը պայմանավորող հիմնական պատճառներն են՝ կարիքների գնահատման համակարգի անկատարությունը, ինչպես նաև գործընթացին շահագրգիռ և պատասխանատու հանրային կառավարման այլ մարմինների (օրինակ՝ զբաղվածության, առողջապահության բնագավառի) ցածր ներգրավվածությունը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

37. Պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի վերաբերյալ ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա կազմվում է վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր՝ հաշվի առնելով պրոբացիայի շահառուի անձի առանձնահատկությունները[5]:

Աղբյուր՝ ՊՄՕ, հոդվ. 28:

38. Վերասոցիալականացման միջոցառումները պետք է տարբերակվեն՝ ելնելով կատարած հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից և հաշվի առնելով պրոբացիայի շահառուի սեռը, տարիքը, սոցիալ-հոգեբանական վիճակը, վերաբերմունքն իր կողմից կատարված հանցագործությանը և այլ առանձնահատկություններ:

Աղբյուր՝ ՊԾՆԿ, կետ 196:

39. ՊԾ-ն իր մոտ հաշվառված պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման[6] նպատակով մշակում և իրականացնում է համապատասխան աշխատանքի և սոցիալական ապահովությանը, մշակութային, կրթական,

[5] ՊԾ-ի համապատասխան ստորաբաժանումը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո գնահատում է նրա ռիսկերը և կարիքները, որոնց հիման վրա ընդունում է որոշում՝ ցածր ռիսկ ունեցող շահառուներին երկու ամսվա ընթացքում մեկ անգամ, միջին ռիսկ ունեցող շահառուներին ամիսը մեկ անգամ, իսկ բարձր ռիսկ ունեցող շահառուներին մեկ ամսվա ընթացքում առնվազն երկու անգամ ՊԾ-ի համապատասխան ստորաբաժանում ներկայանալու մասին, որը ներառվում է վերահսկողության պլանի մեջ: Ռիսկերի և կարիքների գնահատումը կարող է վերանայվել յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ կամ պրոբացիայի շահառուի կյանքում կատարված փոփոխությունների դեպքում: Սույն մասը տարածվում է այն դեպքերի վրա, երբ պրոբացիայի շահառուի նկատմամբ վերասոցիալականացման և վերականգնողական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը բացակայում է (ՊՄՕ, հոդվ. 24, մաս 12):

[6] Վերասոցիալականացումը պրոբացիայի շահառուների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների, միջոցառումների և ծրագրերի, իրավական և հոգեբանական աջակցություն ցուցաբերելու, հասարակությունում վերաինտեգրելու և օրինապահ վարքագիծ ձևավորելու գործընթացների ամբողջությունն է (ՊՄՕ, հոդվ. 3, մաս 1, կետ 13):

մասնագիտական վերապատրաստմանը և վերարակավորմանը, սպորտային, առողջապահական, հոգեբանական, վարքաբանական, զբաղվածությանը ուղղված միջոցառումներ և ծրագրեր:

Աղբյուր՝ ՊՄՕ, հոդվ. 28, մաս 1:

40. ՊԾ-ի կողմից իրականացվող վերասոցիալականացման միջոցառումների *նպատակը* սոցիալական վերականգնման կարճաժամկետ կամ երկարաժամկետ աշխատանքների և ուսումնական ծրագրերի նախաձեռնումն ու իրականացումն է, ինչպես նաև ոգելից խմիչքներ (ալկոհոլ), թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր գործածելու դեմ պայքարի ոլորտում հատուկ ծրագրերի իրականացումը: Վերասոցիալականացման միջոցառումների մշակման նպատակներն են՝

- պրոբացիայի շահառուների կողմից նոր հանցագործությունների կանխումը.
- պրոբացիայի շահառուների համար օգտակար հանրային կապեր և շփումներ ստեղծելը, պահպանելը և զարգացնելը.
- պրոբացիայի շահառուների սոցիալական պաշտպանվածությանը, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը նպաստելը.
- պրոբացիայի շահառուների աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, ստեղծագործական գործունեության զարգացմանը նպաստելը.
- պրոբացիայի շահառուներին հոգեբանական աջակցություն տրամադրելը.
- պրոբացիայի շահառուների իրավահպատակ վարքագծի դրսևորմանը և իրավագիտակցության բարձրացմանը նպաստելը.
- պրոբացիայի շահառուների վերասոցիալիզացիան և հասարակություն վերաինտեգրվելուն նպաստելը:

41. Վերասոցիալականացման միջոցառումների իրականացման փուլը ներառում է՝

- պրոբացիայի շահառուի հիմնական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն (հեռակա) կրթությունը կազմակերպելու կամ շարունակելու ուղղությամբ իրականացվող աշխատանքներին աջակցումը.
- պրոբացիայի շահառուների զբաղվածության ապահովմանը և սոցիալական ապահովությանն ուղղված աշխատանքների կատարումը.
- մասնագիտական վերապատրաստմանը և վերարակավորման ապահովմանն ուղղված աշխատանքների կատարումը.
- հոգեբանական ծրագրերում ընդգրկումը.
- վերապատրաստումներին և հմտությունների զարգացմանն ուղղված այլ ծրագրերում ընդգրկումը.
- մշակութային ծրագրերում ընդգրկումը.
- կրոնական միջոցառումներում ընդգրկումը.
- մարզական միջոցառումներում ընդգրկումը.

- ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, թունամոլությունից կամ դեղամոլությունից պրոբացիայի շահառուին բուժելու ուղղությամբ հոգեբանական, վարքաբանական, սոցիալական և առողջապահական ծրագրերի իրականացումը՝ անհատական և խմբային տարբերակով:

Աղբյուր՝ ՊԾՆԿ, կետ 194, 208:

42. Հարկավոր է տարբեր մակարդակներում գործարկել համապատասխան մեխանիզմներ՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների համար պատասխանատու ծառայությունների, քրեական արդարադատության համակարգի այլ ճյուղերի, սոցիալական ապահովության, առողջապահության, բնակարանային ապահովության, կրթության և աշխատանքի պետական և ոչ պետական գործակալությունների և լրատվամիջոցների հետ կապը խթանելու համար:

Աղբյուր՝ Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ), կետ 22.1:

43. Պրոբացիոն գործակալությունները պետք է համագործակցեն այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունների և տեղական համայնքների հետ՝ իրավախախտների սոցիալական ներառումը խթանելու նպատակով: Համակարգված և փոխլրացնող միջգերատեսչական և միջմասնագիտական աշխատանքն անհրաժեշտ է՝ իրավախախտների համալիր կարիքները բավարարելու և համայնքային անվտանգությունն ապահովելու համար:

Աղբյուր՝ ԵԽ պրոբացիոն կանոններ, կետ 12:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

44. Վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցել է պրոբացիայի շահառուների 8%-ը (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված պրոբացիայի 4252 շահառուներից 359-ը): Յուրաքանչյուր շահառու մասնակցել է 1-ից մինչև 7 միջոցառման:

Աղյուսակ 1. **Պրոբացիայի շահառուների ներգրավվածության մակարդակը վերասոցիալականացման ծրագրերում**

Վերասոցիալականացման ծրագիր	Մասնակցության քանակ	Տեսակարար կշիռ
Ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, թունամոլությունից կամ դեղամոլությունից պրոբացիայի շահառուին բուժելու ուղղությամբ հոգեբանական, վարքաբանական, սոցիալական և առողջապահական ծրագրերի իրականացումը՝ անհատական և խմբային տարբերակով	6	1%
Կրոնական միջոցառումներում ընդգրկում	112	19%
Հոգեբանական ծրագրերում ընդգրկում	9	2%
Մարզական միջոցառումներում ընդգրկում	54	9%
Մշակութային ծրագրերում ընդգրկում	233	39%
Պրոբացիայի շահառուի հիմնական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն (հեռակա) կրթությունը կազմակերպելու կամ շարունակելու ուղղությամբ իրականացվող աշխատանքներին աջակցում	1	0%
Պրոբացիայի շահառուների զբաղվածության ապահովմանը և սոցիալական ապահովությանն ուղղված աշխատանքների կատարում	53	9%
Պրոբացիայի շահառուների զբաղվածության ապահովմանը և սոցիալական ապահովությանն ուղղված աշխատանքների կատարում	5	1%
Վերապատրաստումներին և հմտությունների զարգացմանն ուղղված այլ ծրագրերում ընդգրկում	126	21%
Ընդամենը	**599**	**100%**

45. Վերասոցիալականացման համակարգն ավելի շատ կենտրոնացած է մշակութային և կրոնական միջոցառումների վրա, մինչդեռ՝ աշխատանքային, կրթական և հոգեբանական աջակցությունը կրել է խիստ սահմանափակ բնույթ:

46. Առկա չէ համարժեք կապ կատարված հանցանքի և այն հասցեագրող միջոցառումների միջև: Օրինակ, գողություն (ՔՕ 254-րդ հոդված) կատարած 504 շահառուներից վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցել է 68-ը կամ 13.5%-ը: Ընդ որում, գողություն կատարած և նախկինում դատվածություն ունեցող 114 անձանցից միայն 15-ն (13.2%) է ընդգրկված եղել վերասոցիալականացման միջոցառումներում: Սա վկայում է նրա մասին, որ կրկնակի հանցագործություն կատարած անձինք ավելի քիչ են ընդգրկվել վերասոցիալականացման ծրագրերում:

47. Գողություն կատարած և գործազուրկ 182 շահառուներից ընդամենը 11-ն (6%) է ներգրավված եղել վերասոցիալականացման գործընթացում: Սա վկայում է այն մասին, որ առանց աշխատանքի մնացած անձինք չեն ստացել բավարար աջակցություն սոցիալական վերաինտեգրման համար:

48. Գողություն կատարած և մասնագիտություն չունեցող 172 անձանցից 29-ն (16.9%) է ընդգրկված եղել վերասոցիալականացման ծրագրերում:

49. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության, օգտագործման և աճեցման հետ կապված իրավախախումներ կատարած անձանց շրջանում ևս վերասոցիալականացման ծրագրերում ներգրավվածությունը սահմանափակ է եղել, հատկապես՝ բուժման ոլորտում: Մասնավորապես, նշված իրավախախտումները կատարած 567 անձանցից վերասոցիալականացման ծրագրերում ընդգրկված է եղել 58-ը (10.2%), որտեղ գերակշռել են կրոնական և մշակութային ծրագրերը (ընդհանուրի 70.7%-ը) և ընդամենը 1 անձ ընդգրկված է եղել թմրամիջոցներից կամ ալկոհոլից բուժման ծրագրում:

50. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության, օգտագործման և աճեցման հետ կապված իրավախախտում կատարած և նախկինում դատվածություն ունեցող 70 անձանցից վերասոցիալականացման միջոցառումներում ընդգրկված է եղել 8 անձ կամ շահառուների 11.4%-ը:

51. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը կամ այդ անձի կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը (ՔՕ 344) հոդվածով իրավախախտում կատարած 1413 անձանցից վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցել են 6-ը: Միջոցառումներից 3-ն ունեցել են կրոնական և մշակութային ուղղվածություն, 2 դեպքով շահառուներն ուղղորդվել են Միասնական սոցիալական ծառայություն և 1 շահառու ընդգրկվել է վերապատրաստումներին և հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերում:

Անչափահաս շահառուների վերասոցիալականացման միջոցառումների վերաբերյալ

52. ՊԾ-ում 2023թ. հաշվառման մեջ է գտնվել 33 անչափահաս շահառու, որոնցից միայն 7-ն են (21%) ընդգրկված եղել վերասոցիալականացման ծրագրերում: Ընդ որում, անչափահաս շահառուների կարիքներից բխող *առանձին* վերականգնողական ծրագրեր ներդրված չեն եղել:

53. 33 անչափահաս շահառուներից կարիքների գնահատում իրականացվել է 3 շահառուի համար, որից 2-ի դեպքում գնահատվել է հնարավոր նվազ միջամտության կարիք, իսկ 1 շահառուի մասով գնահատվել է կրթության և մասնագիտության կարիք, սակայն նա ընդգրկվել է մշակութային ծրագրում:

54. Վերասոցիալականացման միջոցառումներից 6-ն առնչվել է կրոնական և մշակութային ծրագրերին, իսկ վերապատրաստումներին և հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերում ընդգրկվել է ընդամենը 1 շահառու՝ սահմանափակելով շահառուների նշված խմբի արդյունավետ վերականգնման հնարավորությունները:

55. Գողություն կատարած 11 անչափահաս շահառուներից 3-ը մասնակցել են կըրոնական և մշակութային միջոցառումների: Չեն իրականացվել մասնագիտական վերապատրաստման ծրագրեր, որոնք թույլ կտային բարձրացնել շահառուների ապագա զբաղվածության և սոցիալական ադապտացման հնարավորությունները:

56. Առողջությանը ծանր վնաս հասցնելու (ՔՕ 112-րդ) հոդվածով իրավախախտում կատարած 10 շահառուներից 2-ը մասնակցել են կրոնական և մըշակութային միջոցառումների: Վերոնշյալ հոդվածով կատարված իրավախախտումը մատնանշում է սոցիալական շփումների և հակամարտությունների կարգավորման մեխանիզմների պակաս, մինչդեռ հմտությունների զարգացման ծրագրերին մասնակցություն չի ապահովվել ոչ մի շահառուի համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդարադատության նախարարությանը

57. Ցուցաբերել ինստիտուցիոնալ առաջնորդություն՝ հանրային կառավարման այլ շահագրգիռ և պատասխանատու մարմինների (այդ թվում՝ ԱՍՀՆ-ի հետ՝ զբաղվածությանը, ԿԳՄՍՆ-ի հետ՝ կրթությանը և ԱՌՆ-ի հետ՝ առողջությանը վերաբերելի մասերով), ինչպես նաև հասարակական, առևտրային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցաբար, մշակելու պրոբացիայի շահառուների համալիր կարիքները[7] համարժեքորեն հասցեագրող միջոցառումների ծրագիր *(Առաջարկություն N 3):*

[7] Որոնք կբացահայտվեն և պարբերաբար կթարմացվեն Առաջարկություն N2-ի իրականացման արդյունքում, ինքնաշխատ կերպով, տեղեկատվական կառավարման համակարգի տվյալների ագրեգացմամբ ձևավորվող հաշվետվությունների հիման վրա:

Ներդրված չի եղել վերասոցիալականացման միջոցառումների արդյունքների գնահատման համակարգ

ԻՆՉՈ՞Ւ Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

58. Արդյունքների գնահատումը հնարավորություն կտա հասկանալ, թե արդյո՞ք կիրառվող ծրագրերն ու միջամտությունները բավարարում են շահառուների կարիքները՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով միջոցառումների թիրախայնությունը բարձրացնող ճշգրտումներ: Արդյունքների գնահատման համակարգը թույլ կտա նաև հետհսկողություն իրականացնել (follow-up) պրոբացիայի շահառուի վարքագծի փոփոխության նկատմամբ:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

59. Մշակված չէ համապատասխան մեթոդաբանություն, գնահատման չափանիշներ և գործիքներ վերասոցիալականացման միջոցառումների արդյունքը գնահատելու համար:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

60. Անհրաժեշտ է սահմանել վերստուգելի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան ստուգել ՊԾ-ի կողմից իրականացված վերասոցիալականացման միջոցառումների ու ծրագրերի արդյունավետության աստիճանը:

Աղբյուր՝ ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարություն, հավելված 2, կետ 57, ենթակետ 4:

61. Պրոբացիայի շահառուի վերասոցիալականացման գործընթացում իրականացված միջոցառումների պարբերական վերլուծության հիման վրա պետք է կատարվի իրականացված միջոցառումների արդյունավետության գնահատում:

Աղբյուր՝ ՊԾՆԿ, կետ 205:

62. Հսկողության և իրականացվելիք գործողությունների եղանակները պետք է պարբերաբար վերանայվեն և ըստ անհրաժեշտության փոփոխվեն: Պայմանները կարող են վերանայվել սահմանված համապատասխան դրույթների հիման վրա՝ ելնելով իրավախախտի մոտ առկա առաջընթացից:

Աղբյուր՝ Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ), կետ 10.3, 12.4:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

63. Պրոբացիայի 359 շահառուների՝ վերասոցիալականացման միջոցառումներին 599 մասնակցությունից 203 դեպքում չի իրականացվել արդյունավետության գնահատում, 108 դեպքում նշվել է մասնակցություն, աշխատանք է առաջարկվել միայն 1 շահառուի:

64. Գնահատման մեթոդաբանության բացակայության պայմաններում 221 դեպք դասակարգվել է որպես «դրական», սակայն առկա չի եղել հստակ չափորոշիչ, թե ինչպես է գնահատվել արդյունավետությունը: Բացակայել են չափելի արդյունքների վերաբերյալ տվյալներ (օրինակ՝ աշխատանքի տեղավորման կամ վարքագծի բարելավման ցուցանիշներ):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրոբացիայի ծառայությանը՝

65. Մշակել և ներդնել միջազգային փորձի վրա հիմնված գնահատման մեթոդաբանություն, որը կներառի չափելի ցուցանիշներ, գնահատման գործիքակազմ և տվյալների վերլուծության մեխանիզմներ՝ վերասոցիալականացման ծրագրերի արդյունավետությունը (շահառուի վրա ազդեցությունը) գնահատելու և շարունակաբար բարելավելու նպատակով *(Առաջարկություն N 4):*

Եզրակացություն

66. Հաշվի առնելով պրոբացիայի շահառուների ռիսկերի ու կարիքների գնահատման, դրանք հասցեագրող վերասոցիալականացման միջոցառումների պլանավորման, իրականացման և հսկողության համակարգի արձանագրված թերությունները, ինչպես նաև վերջին տարիներին պրոբացիայի ծառայությունում առկա վարույթներով իրականացված անձանց կազմում կրկնահանցագործություն կատարած անձանց *տեսակարար կշռի* կրկնապատկումը, պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված գործունեության մեջ չի ապահովվել նպատակային արդյունավետություն:

Առաջարկություններ և արձագանք

ԱՐԴՅՈՒՆՔ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ
Պրոբացիայի շահառուների ռիսկերն ու կարիքները համարժեքորեն չեն բացահայտվել	***Պրոբացիայի ծառայությանը՝*** Ռիսկերի և կարիքների գնահատման վերանայված, ժամանակի և տարածության մեջ փորձարկված արդիական մեթոդաբանության հիման վրա ստանալ պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների ամբողջական և ճշգրիտ պատկերը *(Առաջարկություն N 1)*: *Արդարադատության նախարարության մեկնաբանությունը* Արդարադատության նախարարի կողմից 28.03.19թ.-ին ընդունվել է «ՀՀ ԱՆ ՊԾ շահառուի ռիսկերի և կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքը», որը ՊԾ-ում սկսվել է կիրառվել 01.04.2019թ.-ից: Հիշյալ էլեկտրոնային գործիքը ԵԽ աջակցությամբ վերանայվել է, ինչպես նաև մշակվել է «ՊԾ չափահաս և անչափահաս շահառուների քրեածին կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքները», որոնք հաստատվել են Արդարադատության նախարարի 21.01.22թ. թիվ 31-Լ հրամանով: 24.12.04թ.-ին ընդունված ՀՀ քրեակատարողական նախկին օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակների մասով իրականացվել է դատապարտյալի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատում, սակայն գնահատման գործընթացը եղել է անարդյունավետ, քանի որ անկախ ցուցանիշից (ցածր, միջին կամ բարձր ռիսկ) շահառուին վերասոցիալականացման միջոցառումներին ներգրավելու գործիքակազմ չի եղել, միաժամանակ պարտադիր պայման է եղել վերջիններիս գրավոր համաձայնությունը, որը հիմնականում բացակայել է: Առանձին պատժատեսակների (օրինակ՝ տուգանք) կատարման առանձնահատկությունների հաշվառմամբ նկատի ունենալով վերոհիշյալ գործընթացի նվազ արդյունավետությունը՝ 15.06.22թ.-ին ընդունված ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքից հանվել են ռիսկերի և պահանջմունքների գնահատման վերաբերյալ դրույթները: Ներկայում՝ ազատությունից զրկելու հետ չկապված բոլոր պատժատեսակներով և վարչական հսկողություն այլընտրանքային խափանման միջոցով գրավոր համաձայնություն է ձեռք բերվում շահառուի վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցելու ցանկության վերաբերյալ:

Միաժամանակ, հայտնում ենք, որ ԵԽ աջակցությամբ վերանայվել և մշակվել է ռիսկերի և քրեածին կարիքների գնահատման գործիքը, գնահատվել են կրկնահանցագործություն կատարած և առաջին անգամ դատապարտված շահառուների ռիսկերը և կարիքները, որի արդյունքում փորձագետների կողմից մշակվել և Արդարադատության նախարարի 07.02.25թ. թիվ 57-Լ հրամանով հաստատվել է վերոնշյալ գործիքը, ինչը ներկայում հնարավորություն կտա ավելի ճշգրիտ գնահատել շահառուների ռիսկերը և քրեածին կարիքները, դրանց գնահատման հիման վրա կազմել վերջիններիս վերասոցիալականացման անհատական պլանները և նրանց ներգրավել իրենց կարիքներից բխող վերասոցիալականացման և վերականգնմանն ուղղված ծրագրերին ու միջոցառումներին:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը

Պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման գործիքների՝ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում կիրարկման արդյունքները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 19-24-րդ կետերում՝ վկայելով պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների համարժեք չբացահայտման մասին:

Քրեակատարողական օրենսգրքում տեղի ունեցած փոփոխությունների առնչությամբ հարկ է նկատել, որ դրանք որևէ կերպ չեն սահմանափակել «Պրոբացիայի մասին» օրենքով սահմանված՝ տարբերակման ու անհատականացման, զուգակցման և աջակցության սկզբունքների վերաբերելիությունը պրոբացիայի բոլոր շահառուներին, ըստ այդմ՝ բոլոր շահառուների ռիսկերի ու կարքիների գնահատման և դրանք հասցեագրող վերասոցիալականացման միջոցառումների մշակման *հնարավորությունը* (այդ թվում՝ տուգանք պատժատեսակի մասով, որի համատեքստում ռիսկերի և կարիքների գնահատման անհրաժեշտությանն անդրադարձել ենք սույն ընթացիկ եզրակացության 20-րդ կետում): Պրոբացիայի բոլոր շահառուներին համալիր կերպով «ճանաչելու» հարցում ՊԾ-ի *պրոակտիվ* մոտեցումը կարևոր է պատժի ենթարկված անձանց վերասոցիալականացման, կրկնահանցագործությունների կանխարգելման և կրճատման միջոցով հասարակության անվտանգության ապահովման *նպատակին հասնելու* տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, կարևորում ենք հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանից հետո պրոբացիայի շահառուի ռիսկերի և կարիքների գնահատման գործիքակազմի բարելավման ուղղությամբ ԱՆ կողմից իրականացված աշխատանքները: 2025թ. փետրվարին վերանայված գործիքի արդյունավետությունը հնարավոր կլինի գնահատել միառժամանակ հետո՝ դրա կիրարկման արդյունքների հիման վրա: Հաշվեքննիչ պալատը հետհսկողություն կիրականացնի նշված գործընթացի նկատմամբ՝ արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով տեղեկացնելով հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Տեղեկատվական կառավարման համակարգն ունի զգալի չիրացված ներուժ

Արդարադատության նախարարությանը՝

Տեղեկատվական կառավարման համակարգում ապահովել պրոբացիայի շահառուին վերաբերելի, փաստաթղթերում պարունակվող տվյալների մուտքագրման հնարավորություն, տվյալների այլ շտեմարանների հետ փոխգործելիության հիման վրա տվյալների ինքնաշխատ լրացում, ինչպես նաև առկա տվյալների հիման վրա հաշվետվությունների (ինչպես շահառուի մակարդակում, այնպես էլ՝ ագրեգացված՝ բոլոր շահառուների կամ նրանց առանձին խմբերի մակարդակում) գեներացում *(Առաջարկություն N 2):*

Արդարադատության նախարարության մեկնաբանությունը

Ներկայում ԵԽ աջակցությամբ աշխատանքներ են իրականացվում այլընտրանքային խափանման միջոցների թվայնացման, գործնականում առաջացող ծրագրային խնդիրների լուծման, համակարգի կատարելագործման, ինչպես նաև ծրագրի ֆունկցիոնալության բարձրացման ուղղությամբ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը

Կարևորում ենք էլեկտրոնային կառավարման համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացման հանգամանքը: Հաշվեքննիչ պալատը հետհսկողություն կիրականացնի նշված գործընթացի նկատմամբ՝ արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով տեղեկացնելով հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Վերասոցիալականացման ծրագրերին մասնակցել են պրոբացիայի շահառուների փոքր մասը

Արդարադատության նախարարությանը՝

Ցուցաբերել ինստիտուցիոնալ առաջնորդություն՝ հանրային կառավարման այլ շահագրգիռ և պատասխանատու մարմինների (այդ թվում՝ ԱՍՀՆ-ի հետ՝ զբաղվածությանը, ԿԳՄՍՆ-ի հետ՝ կրթությանը և ԱռՆ-ի հետ՝ առողջությանը վերաբերելի մասերով), ինչպես նաև հասարակական, առևտրային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցաբար, մշակելու պրոբացիայի շահառուների համալիր կարիքները[8] համարժեքորեն հասցեագրող միջոցառումների ծրագիր *(Առաջարկություն N 3):*

Արդարադատության նախարարության մեկնաբանությունը

ՊԾ-ում հաշվառված շահառուների վերասոցիալականացման և վերականգնողական ծրագրերի իրականացման համար բյուջեյով առանձին ֆինանսավորում չի հատկացվել, ՊԾ-ն վերոնշյալ միջոցառումները և ծրագրերն իրականացնում է միայն տարբեր գերատեսչությունների, կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում, որի արդյունքում իրականացվել են ավելի մեծ թվով կրոնական և մշակութային ուղղվածությամբ ծրագրեր, իսկ աշխատանքային, կրթական և հոգեբանական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ է ֆինանսական ռեսուրսներ՝ տարբեր կառույցներին պատվիրակելու համար: Վերասոցիալականացման առավել լայն ծրագրերի իրականացման համար 2026թ. ՄԺԾԾ բյուջետային հայտում համապատասխան հիմնավորումներով ներկայացվելու է առանձին ֆինանսավորման հատկացման անհրաժեշտությունը:

Կարևորելով աշխատանքային, կրթական և հոգեբանական ուղղվածությամբ ծրագրերի իրականացումը՝ ԵԽ-ի հետ համագործակցության շրջանակում

[8] Որոնք կբացահայտվեն և պարբերաբար կթարմացվեն Առաջարկություն N2-ի իրականացման արդյունքում, ինքնաշխատ կերպով, տեղեկատվական կառավարման համակարգի տվյալների ագրեգացմամբ ձևավորվող հաշվետվությունների հիման վրա:

2024թ. ՊԾ-ում ներդրվել են հոգեբանական ուղղվածությամբ 2 վերականգնողական ծրագրեր՝ «Բռնի վարքի նվազեցման» և «Կախվածությունների հաղթահարման» ուղղությամբ: ՊԾ մասնագետները վերապատրաստվել են և վերջիններս արդեն իսկ կարող են վերոնշյալ վերականգնողական ծրագրերը շարունակաբար իրականացնել շահառուների հետ: Կարևորելով հոգեբանական աշխատանքների անհրաժեշտությունը՝ ՊԾ-ի հոգեբան-մասնագետների կողմից 2024թ. ընթացքում իրականացվել է ավելի մեծ թվով անհատական և խմբային հոգեբանական աշխատանքներ՝ ուղղված շահառուների ինքնակարգավորման մեխանիզմների զարգացմանը, հույզերի կառավարմանը, ծնողավարման հմտությունների զարգացմանը և այլ խնդիրներին, որին մասնակցել է 96 շահառու:

ՊԾ-ն կրթական և մասնագիտական ուղղվածությամբ ծրագրեր շրջանակներում ակտիվ համագործակցում է ԱՆ «Իրավական կրթություն և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ և 2024թ. ԱՆ կողմից առաջին անգամ հաստատվել են առանձին կրթական մոդուլներ ՊԾ-ում հաշվառված շահառուների համար, որոնք բխում են վերջիններիս անհատական կարիքներից:

Միաժամանակ, ԵԽ-ի աջակցությամբ «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի շրջանակներում 2022թ. դեկտեմբերից Արարատի մարզի Արարատ քաղաքում հիմնվել է ուսումնական կենտրոն, որտեղ պրոբացիայի շահառուների համար իրականացվում են «Կահույքաշինության հիմունքներ», «Կարի հիմունքներ», «Կոսմետոլոգիական հմտություններ» և «Վարսավիրական հմտություններ» մասնագիտություններով դասընթացներ: Նշված դասընթացներն իրականացվում են որակավորված մասնագետների կողմից՝ մասնագիտական գործիքներով և սարքավորումներով հագեցած լսարաններում: Հաշվի առնելով Երևանում հաշվառված պրոբացիայի շահառուների ծավալն ու վերջիններիս կողմից նշված դասընթացների նկատմամբ հետաքրքրությունը և ներգրավվածությունը, ինչպես նաև կարևորելով վերասոցիալականացման և վերականգնողական ծրագրերի իրականացումը՝ նախատեսվում է ուսումնական կենտրոնը տեղափոխել Երևան քաղաք (արդեն իսկ ՊԾ-ին տրամադրվել է համապատասխան տարածք), ինչը հնարավորություն կընձեռի ավելի շատ թվով շահառուներ ներգրավել իրականացվող ծրագրերին ոչ միայն Երևանից, այլև հարակից մարզերից և ընդլայնել պահանջարկ ունեցող մասնագիտությունների ցանկը:

ՊԾ-ում 2024թ. վերականգնողական ծրագրերի ներդրման և տարաբնույթ վերասոցիալականացման աշխատանքների արդյունավետ իրականացման արդյունքում դատարանները շահառուների նկատմամբ սահմանում են ավելի շատ և տարաբնույթ վերականգնողական ուղղությամբ պարտականություններ, որն էլ հնարավորություն է տալիս ավելի մեծ թվով շահառուների ներառել վերականգնողական ծրագրերում:

ՊԾ-ում առկա է անչափահաս շահառուների համար նախատեսված ռիսկերի և քրեածին կարիքների առանձին գնահատման գործիք և ՊԾ-ում վերահսկողությամբ հաշվառված բոլոր անչափահաս շահառուները պարտադիր գնահատվում են վերոնշյալ գործիքով, այնուհետև գնահատման արդյունքների հաշվառմամբ կազմվում է անչափահաս շահառուի վերասոցիալականացման պլանը, պարտադիր իրականացվում են տնայցեր, ինչպես նաև այցեր շահառուի ուսման վայր, վերասոցիալականացման աշխատանքների իրականացման շրջանակներում պարտադիր ներառվում է ընտանիքը կամ անչափահաս շահառուին աջակից այլ անձիք: Ներկայում ՊԾ-ում աշխատանքներ են իրականացվում անչափահաս շահառուների կարիքներից բխող առանձին վերականագնողական ծրագիր ներդնելու ուղղությամբ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը

Վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցության մասով, հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանին վերաբերելի արդյունքները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 44-56-րդ կետերում՝ վկայելով մասնակցության ցածր մակարդակի մասին:

Միևնույն ժամանակ, կարևորում ենք 2024թ. ընթացքում վերասոցիալականացման ուղղությամբ նոր աշխատանքների իրականացման հանգամանքը: Այնուհանդերձ, հարկ է նկատել, որ անգամ այդ աշխատանքների հաշվառմամբ, 2024թ. նույնպես վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցությունը շարունակել է մնալ ցածր (օրինակ՝ ԱՆ «Իրավական կրթություն և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կրթական ծրագրերին մասնակցել է ընդամենը 45 շահառու կամ շահառուների թվի 0.4%-ը (ընդ որում՝ որոշները՝ 1-ից ավելի դասընթացի), ՊԾ միջնորդությամբ և վերասոցիալականացման միջոցառումների արդյունքում աշխատանքի է տեղավորվել ընդամենը 7 շահառու կամ շահառուների թվի 0.06%-ը՝ նախորդ տարվա 13-ի դիմաց և այլն[9]): Վերասոցիալականացման միջոցառումների պլանավորման, այդ թվում՝ ՊԾ-ի կողմից մատնանշված՝ 2026թ. բյուջետային հայտի ձևավորման տեսանկյունից, կարևոր է Առաջարկություն N1-ի իրագործմամբ, պրոբացիայի բոլոր շահառուներին համալիր կերպով «ճանաչելը», Առաջարկություն N2-ի իրագործմամբ, նրանց կարիքների վերաբերյալ համապարփակ, ժամանակին և հուսալի տվյալների առկայությունը, ինչպես նաև Առաջարկություն N3-ի իրագործմամբ, մակրո- մակարդակում, գործընկեր մարմինների ու կազմակերպությունների ներուժի օգտագործմամբ, շահառուների ռիսկերն ու կարիքները համարժեքորեն հասցեագրող միջոցառումների մշակումը:

Հաշվեքննիչ պալատը հետհսկողություն կիրականացնի վերասոցիալականացման միջոցառումների մշակման գործընթացի և համարժեքության նկատմամբ՝ գնահատման արդյունքների մասին սահմանված կարգով տեղեկացնելով հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Ներդրված չի եղել վերասոցիալականացման միջոցառումների արդյունքների գնահատման համակարգ

Պրոբացիայի ծառայությանը՝

Մշակել և ներդնել միջազգային փորձի վրա հիմնված գնահատման մեթոդաբանություն, որը կներառի չափելի ցուցանիշներ, գնահատման գործիքակազմ և տվյալների վերլուծության մեխանիզմներ՝ վերասոցիալականացման ծրագրերի արդյունավետությունը (շահառուի վրա ազդեցությունը) գնահատելու և շարունակաբար բարելավելու նպատակով *(Առաջարկություն N 4):*

Արդարադատության նախարարության մեկնաբանությունը

ՊԾ-ն չի ունեցել առանձին մշակված գործիքակազմեր վերասոցիալականացման և վերականգնմանն ուղղված ծրագրերի գնահատման նպատակով, քանի որ վերասոցիալականացմանն ուղղված բոլոր ծրագրերը և միջոցառումները նախկինում իրականացվել են տարբեր գերատեսչությունների հետ համագործակցության արդյունքում, ինչը կախված է եղել տվյալ ժամանակահատվածում տվյալ գերատեսչության կամ ՀԿ-ի հնարավորություններից:

Ներկայում ՊԾ-ն ունի 2024թ.-ին ներդրված վերականգնողական ծրագրերի իրականացման արդյունավետության չափելիության գնահատման գործիքակազմեր, ինչպես նաև մշակվում և իրականացվում են միայն երկարաժամկետ (առնըվազն 3 ամիս) տևողությամբ վերասոցիալականացմանն ուղղված ծրագրեր և

---

[9] ՀՀ ԱՆ ՊԾ կողմից 2024թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, www.probation.am:

միջոցառումներ՝ իրենց գնահատման գործիքակազմերով, քանի որ միայն երկարաժամկետ իրականացվող վերասոցիալականացմանն ուղղված ծրագրերի համար է հնարավոր մշակել գնահատման հստակ մեթոդաբանություն և չափանիշներ, որը հնարավորություն կտա ավելի ճշգրիտ գնահատել ծրագրերի արդյունավետությունը:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը

Վերասոցիալականացման միջոցառումների արդյունքների գնահատման համակարգի մասին, հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանին վերաբերելի արձանագրումները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 63-64-րդ կետերում: Ընդ որում, հաշվի առնելով, որ պրոբացիայի շահառուի վարքագծի դինամիկան դիտարկվում է ՊԾ-ի կողմից, ուստի վերասոցիալականացման միջոցառումների (այդ թվում՝ այլ գերատեսչությունների կողմից իրականացված) դրական, չեզոք կամ բացասական ազդեցությունը պրոբացիայի շահառուի վարքագծի վրա հնարավոր է գնահատել չափելի չափանիշների և ցուցիչների միջոցով:

Միևնույն ժամանակ, կարևորում ենք հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանից հետո գնահատման չափանիշների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Հաշվեքննիչ պալատը հետհսկողություն կիրականացնի վերասոցիալականացման միջոցառումների արդյունքների գնահատման գործընթացի նկատմամբ՝ սահմանված կարգով տեղեկացնելով հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Հաշվեքննության մասին

67. Կատարողականի հաշվեքննությունների իրականացմամբ Հաշվեքննիչ պալատը հանրությանն ու Ազգային ժողովին ներկայացնում է հավաստիացում հանրային սեփականության կառավարման արդյունավետության վերաբերյալ: Նպատակը՝ հանրային կառավարման արդյունավետության բարելավմանը նպաստելն է:

68. Կատարողականի հաշվեքննության թեմաները ձևակերպվում են ռազմավարական գործընթացի արդյունքում՝ հիմնվելով արտաքին պետական հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթությունների վրա: Թեմաների ընտրությունը կատարվում է՝ ելնելով դրանց էականությունից, բարելավման ներուժից և հաշվեքննելիությունից:

69. Կատարողականի հաշվեքննությունը պլանավորվում, իրականացվում և արդյունքներն ամփոփող հաշվետվությունը կազմվում է՝ առաջնորդվելով աուդիտորական էթիկայի սկզբունքներով և մասնագիտական ստանդարտներով[10]՝

- սահմանելով կատարողականի գնահատման հուսալի չափանիշներ՝ հիմնված օրենսդրության և միջազգային լավագույն փորձի վրա: Չափանիշները ցույց են տալիս, թե հաշվեքննության առարկան ինչպիսի պայմանների պետք է բավարարի, որպեսզի ապահովվի բարձր կատարողական: Չափանիշները հաշվեքննության իրականացման փուլի մեկնարկին քննարկվում են հաշվեքննության ենթակա մարմնի հետ.

- հավաքելով հաշվեքննության բավարար (քանակապես) և համապատասխան (որակապես) ապացույցներ.

- ներկայացնելով հաշվեքննության արդյունքները՝ առկա իրավիճակը հաշվեքննության չափանիշների հետ համեմատելու հիման վրա.

[10] Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի «Կատարողականի հաշվեքննության մեթոդաբանության» համաձայն՝ հիմնված «ISSAI 100 - Հանրային հատվածում աուդիտի հիմնարար սկզբունքները» և «ISSAI 300 - Կատարողականի աուդիտի սկզբունքները» աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտների վրա:

- վեր հանելով հաշվեքննության արդյունքը պայմանավորող պատճառներն ու հետևանքները: Բացահայտված պատճառները կարևոր են բարելավման առաջարկությունների ուղենշման համար, իսկ հետևանքները՝ նպատակ են հետապնդում հաշվետվությունն օգտագործողներին ներկայացնել հաշվեքննության առաջարկությունների կատարման անհրաժեշտության հիմնավորումները.

- եզրակացնելով՝ ի պատասխան հաշվեքննության նպատակի.

- առաջարկելով ինչ անել՝ հաշվեքննության առկա հիմնախնդիրները լուծելու և կատարողականը բարելավելու համար:

70. Հաշվետվության հաստատումից հետո իրականացվում է հետհսկողություն՝ պարբերաբար հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը ներկայացնելով տեղեկատվություն հաշվեքննության առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

71. Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի 2024թ. ապրիլի 30-ի թիվ 52-Ա որոշմամբ հաստատված առաջադրանքի հիման վրա: Հաշվեքննիչ պալատի 2024թ. գործունեության ծրագրի 2-րդ մասի 8-րդ ծրագրային կետի կատարումը նպաստել է հաշվեքննության 2024-2026թթ. միջնաժամկետ առաջնահերթություններից 4.3-րդ ուղղության իրագործմանը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄԸ

72. Առարկան. Հաշվեքննության ընթացքում գնահատվել է պրոբացիայի ծառայության գործունեությունը:

73. Նպատակը. Տվյալ հաշվեքննության նպատակն է՝ գնահատել պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված՝ պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել տվյալ բնագավառում հանրային կառավարման բարելավմանն ուղղված առաջարկություններ:

74. Հարցերը. Հաշվեքննության են ենթարկվել ձևակերպված նպատակից բխող հետևյալ հարցերը՝

- իրականացվե՞լ է արդյոք պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և կարիքների արդյունավետ գնահատում.

- պլանավորվե՞լ են արդյոք պրոբացիայի շահառուի վերաբերյալ բացահայտված ռիսկերն ու կարիքներն արդյունավետորեն հասցեագրող վերասոցիալականացման միջոցառումներ.

- նախատեսված վերասոցիալականացման միջոցառումների կատարման գործընթացում ապահովվե՞լ է արդյոք բավարար արդյունավետություն:

75. Մոտեցումը. Կատարողականի հաշվեքննությունն իրականացվել է խնդրին և համակարգին միտված մոտեցումներով: Համակարգին միտված մոտեցման դեպքում ուսումնասիրվում է կառավարման համակարգերի պատշաճ գործունեությունը, իսկ խնդրին միտված մոտեցման դեպքում ուսումնասիրվում, հաստատվում և վերլուծվում են կատարողականի առանձին խնդիրները (չափանիշներից շեղումները) և դրանց պատճառները:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

76. Հաշվեքննության ենթակա մարմինը (օբյեկտը) Արդարադատության նախարարությունն է:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

77. Որպես հաշվեքննության չափանիշների աղբյուրներ են դիտարկվել հաշվեքննության առարկային վերաբերելի ՀՀ օրենսդրությունն ու միջազգային լավագույն փորձը, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնները: Ընտրված չափանիշները ներկայացված են հաշվեքննության յուրաքանչյուր արդյունքին կից:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

78. Հաշվեքննությունն ընդգրկել է 2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը ներառող ժամանակաշրջանը: Հաշվեքննությունը կատարվել է 2024թ. հունիսի 3-ից մինչև 2025թ. փետրվարի 27-ն ընկած ժամանակահատվածում:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԱՐՄՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

79. Հաշվեքննության արդյունքներն ամփոփող հաշվեքննության արձանագրությունը սահմանված կարգով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտին: Հաշվեքննության օբյեկտի ղեկավարը 2025թ. մարտի 3-ին ներկայացրել է իր մեկնաբանությունները արձանագրված փաստերի վերաբերյալ: Հաշվեքննության օբյեկտի մեկնաբանությունները, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի արձագանքը դրանց վերաբերյալ ներառվել են սույն փաստաթղթում (մասնավորապես՝ «Առաջարկություններ և արձագանք» բաժնում):

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲԸ

80. Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի կատարողականի հաշվեքննության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Ջանջուղազյանը:

Ատոմ Ջանջուղազյան
Հաշվեքննիչ պալատի նախագահ
27 փետրվարի, 2025 թվական
Հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան 19, ք. Երևան
Հայաստանի Հանրապետություն

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒԺԵՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բաղրամյան 19
www.armsai.am, secretariat@armsai.am